ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ Հ.143 ՀԻՄՆ.ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Մ/մ-ը բաղկացած է 6 ուսուցիչներից,ովքեր դասավանդում են մաթեմատիկա,իմֆորմատիկա,ֆիզիկա,քիմիա, կենսաբանություն և բնագիտություն առարկաները:Այս ուստարվա սկզբում մեր շարքերը համալրվեց նոր մաթեմատիկայի ուսուցչով՝Ավետիսյան Էմմա,ով շատ արագ ինտեգրվեց մեր դպրոցին և սկսեց հաջողությամբ անցկացնել նաև իր դասերը: Մ/մ-ն 6 անդամներից 5-ը դասղեկներ են:Այս կիսամյակի ընթացքում մ/մ անդամները մշտապես ընդգրկված են եղել մասնագիտական զարգացմանը ուղղված դարներ դասընթացների և ծրագրերի մեջ,մասնավորապես՝Ար. Ղազարյանը օգոստոսի 15-ից մինչև հոկտեմբերի 30-ը պարտադիր վերապատրաստում է անցել ինտերակտիվ կրթության զարգացում հիմնադրամի կողմից և ստացել է 11 կրեդիտ:Ար. Խազարյանը հոկտեմբերին մասնակցել է նաև <<Աշխարհն առանց թափոնների>> ծրագրի շրջանակներում իրականացված ուսուցիչների վերապատրաստման դասընթացին և ստացել հավաստագիր: Նա նաև դեկտեմբերի 21-ին <<Էկո ակումբ>> խմբակի աշակերտների հետ մասնակցել է հերթական ատեստավորման:Ար. Բունիաթյանը 2022թ. նոյեմբերի 23-ին մասնակցել է <<Իմ դպրոց >>-ի կողմից կազմակերպված միջոցառմանը և ստացել շնորհակալագիր ՀՀ կրթության ոլորտում տեղեկատավական

տեխնոլոգիաների կիրառման անփոխարինելի ավանդի համար և հավստագիր 6ա դասարանի հաղթանակի կապակցությամբ:

2022թ. հոկտեմբերին 7ա դասարանում երկրաչափություն առարկայից անցկացվել է գործնական աշխատանք:Դասն անցկացրել է բակում `նպատակ ունենալով սեր առաջացնել առարկայի նկատմամբ և ցույց տալ առարկայի առանձնահատկություններն ու կիրառումը առօրյա կյանքում:Դասն աշակերտների մոտ մեծ ոգևորություն էր առաջացրել:

Էմ.Ավետիսյանը որպես սկսնակ ուսուցիչ դասալսումներ է կատարել մի քանի ուսուցիչների մոտ և ավելի կատարելագործվել : Ներգրավվել է 4-րդա,5-րդա և 5-րդբ դասարաններին <<Իմ դպրոց>> կրթական կայքում և բոլորի հետ աշխատել նաև այդ ծրագրով:

Ս.Բալյանը 1-ին կիսամյակում դասավանդել է ինֆորմատիկա և ֆիզիկա առարկաները:2022թ. օգոստոսի 18-ից մինչև հոկտեմբերի 30-ը մասնակցել է <<Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան հ.135 հիմն. դպրոց>> ՊՈԱԿ-ի կողմից հանրակրթական ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների համար իրականացված վերապատրաստման դասընթացին <<Ֆիզիկա>> առարկայից և ստացել 11 կրեդիտ:Քիմիայի ուսուցչուհի Ս. Մաշինյանը քիմիայի դասերի ընթացքում աշխատում է շեշտը դնել գորշնական աշխատանքների վրա,քանի որ մենք գնում ենք դեպի բնագիտական առարկաների տեսանելի դարձնելու ուղղությամբ:

Ար. Խալաթյանի կատարած աշխատանքները անգնահատելի են և վերաբերվում են ամբոխջ դպրոցին:Որևէ միջոցառում առանց իր ղեկավարության և օգնության չի անցկացվում:Նա նաև աշակերտների մոտ զարգացնում է հանրօգուտ աշխատանք կատարելու ունակությունը և օգնում այդ աշխատանքներում, նաև օրինակ ծառայում:

<<E-school Armenia>> նախագծի շրջանակներում մեր՝ Մ. Խորենացու անվան հ.143 հիմն. դպրոցն ընտրվել է որպես մենթոր դպրոց:Եվ մեր մ/մ ուսուցիչներից Ս.Բալյանը,Էմ.Ավետիսյանը և Ս.Մաշինյանը էլեկտրոնային դասեր են վարել այն դպրոցի աշակերտների համար , որոնցում առկա է առարկայական մասնագետների պակաս:Այս ծրագրի շրջանակներում Ս.Բալյանը սեպտեմբեր ամսից հեռավար կերպով դասավանդում է Արարատի մարզի Դարբնիկի Ժորա Եսայանի անվան միջնակարգ դպրոցում,որտեղ 1-ին կիսամյակում ունեցել է 10 դասաժամ /7-րդ ,12-րդ դաս.,2-ական ժամով/:

Էմ.Ավետիսյանը որպես մենթոր աշխատել է Տաշիրի շրջանի Մեղովկայի միջնակարգ դպրոցի 7-րդ և 8-րդ դասարաններում ունեցել է 5դասաժամ:

Ս.Մաշինյանը որպես մենթոր սեպտեմբերի 11-ից նոյեմբերի 3-ը աշխատել է Արարատի մարզի գ.Քաղցրաշենի Սամվել Գևորգյանի անվան միջնակարգ դպրոցում և դասավանդել է 7ա, 11 և 12 դասարաններում, ունեցոլ է 6 դասաժամ:

Ս. Մաշինյանը նոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 23-ը հեռավար կերպով աշխատել է Սյունիքի մարզի Գորայքի միջնակարգ դպրոցում: Դասավանդել է 7-12-րդ դասարաններում և ունեցել է 12 դասաժամ: Հեռավար այս դասերի մատուցման մեջ հիմնականում խնդիր ենք ունենում կապի հետ կապված այն դպրոցների կողմից, որտեղ աշխատում ենք և հաճախ կապն ընդատվում է: Դպրոցների մի մասը աշխատում է zoom ծրագրով, մյուսը Teams-ով: Որոշ դասեր տեսաձայնագրվում են և ուղարկվում մեր դպրոցի մենթորների ղեկավարող մենթոր Մելիք Մկրտչյանին:

Մ/մ բոլոր անդամները առաջին կիսամյակում նախատեսված բոլոր գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքները կատարել են

ժամանակին և գրանցել մատյանում: Նրանցից յուրաքանչյուրը ամիսը մեկ անգամ մ/մ նիստերին ներկայացրել է իր կատարած աշխատանքները: Անդրադառնալով օլիմպիադաների մասնակցությանը ասեմ, որ մաթեմատիկայի օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցել են 6-9-րդ դասարանի աշակերտները, և հավաքել են առավելագույնը 12 միավոր, սակայն իրավունք չեն ստացել մասնակցելու հաջորդ փուլին: Կենսաբանության օլիմպիադային մասնակցել են 2 աշակերտ 9-րդ դասարանից: Ֆիզիկայի օլիմպիադայի ներդպրոցական փուլին մասնակցել է 3 աշակերտ 9-րդ դասարանից: Քիմիա առարկայից մասնակից չենք ունեցել: Մ/մ բոլոր անդամները պարբերապար մասնակցել են ծնողական հանդիպումներին և զարգացրել ծնող-ուսուցիչ կապը: Մ/մ անդամները նաև անհատական աշխատանք են կատարել ներառական կրթությամբ աշակերտների հետ: Դեկտեմբեր ամսին ԳԹԿ-ի կողմից 8ա և 8բ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվեց գրավոր աշխատանք, որը համակցված թեստ էր՝ ֆիզիկա- քիմիա առարկայից: Մ/մ 22-23 ուստարվա առաջին կիսամյակի կատարած աշխատանքը համարում եմ բավարար:

Բնագիտամաթեմատիկական

Մեթոդմիավորման նախագահ՝ Ս.Մաշինյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ Հ.143 ՀԻՄՆ.ԴՊՐՈՑԻ
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ
2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՏԱՐԵԿԱՆ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Մ/մ-ը բաղկացած է 6 ուսուցիչներից,ովքեր դասավանդում են մաթեմատիկա,իմֆորմատիկա,ֆիզիկա,քիմիա, կենսաբանություն և բնագիտություն առարկաները: Այս ուստարվա ընթացքում մ/մ անդամները մշտապես ընդգրկված են եղել մասնագիտական զարգացմանը ուղղված դասընթացներին ծրագրերի մեջ,մասնավորապես՝Ար. Ղազարյանը <<Իմուն Պարեկ>> ծրագրի շրջանակներում 8-րդ[ա,բ] դասարաններում դասեր է անցկացրել խաղերի ձևով: Ծրագիրը Եվրոպական միության աջակցությամբ իրականացնում են ՀՀԿԳՄՄՆ նախարարությունը և առողջապահության համաշխարհային կազմակերպությունը: Այս ծրագրի շնորհիվ աշակերտները ավելի լավ ծանոթացան իմունային համակարգին և պատվաստանյութերին: Ար. Ղազարյանը ապրիլի 18-ին 7-րդ [բ] դասարանում անցկացրել է բաց դաս <<Ծաղկավոր բույսերի օրգանները>>թեմայով: Դասը ներկայացված էր որպես թեմայի ամփոփում և աշակերտները լավ տիրապետում էին առարկային:

Ար. Բունիաթյանը մասնակցել է 2022-2023 ուստարվա ընթացքում կազմակերպված վերապատրաստումներին և պարտադիր ատեստավորման: Ամբողջ տարվա ընթացքում աշխատել է <<Իմ դպրոց >>կրթական հարթակում և արժանացել <<Նորարարուսուցիչ>>կոչմանը: Աշակերտները մեծ ոգևորությամբ են կատարում այդ տարաբնույթ և հետաքրքիր առաջադրանքները:

Մաթեմատիկայի ուսուցիչ Էմ. Ավետիսյանը իր դասավանդած 4-ի ա,5-ի ա և 5-ի բ դասարանների աշակերտներին ներգրավել է <<Իմ դպրոց>> կրթական հարթակում և աշակերտները օգտվում են այդ հարթակից:
<<E-school Armenia>> նախագծի շրջանակներում մեր՝ Մ. Խորենացու անվան հ.143 հիմն. դպրոցն ընտրվել է որպես մենթոր դպրոց:Եվ մեր մ/մ ուսուցիչներից Ս.Բալյանը,Էմ.Ավետիսյանը և Ս.Մաշինյանը էլեկտրոնային դասեր են վարել այն դպրոցի աշակերտների համար , որոնցում առկա է առարկայական մասնագետների պակաս:
Էմ. Ավետիսյանը հանդիսանում է նաև մենթոր ուսուցիչների համակարգող և դասալսումներ է կատարել մի քանի ուսուցիչների մոտ և խնդիրները բարձրաձայնել ամեն շաբաթյա ամփոփիչ հանդիպման ժամանակ,որտեղ քննարկվել է այդ շաբաթվա ընթացքում տեղի ունեցած դրական և բացասական կողմերը:Ավետիսյանը դասավանդում է նաև Լոռու մարզի Մեղովկայի միջնակարգ դպրոցի 7 և 8-րդ դասարաններում և ունի 10 ժամը:
Ֆիզիկայի և ինֆորմատիկայի ուսուցիչ Ս.Բալյանը որպես մենթոր աշխատել է Արարատի մարզի Դարբնիկի Ժորա Եսայանի անվան միջնակարգ դպրոցում 7-ից 11-րդ դասարաններում և ունեցել է 12 դասաժամ:Հունվարի 27-29-ը Ս. Բալյանը ,Ս.Մաշինյանը,Կ. Կոստանյանը մասնակցել են ԿՏԱԿ-ի կողմից կազմակերպված <<Համակցված ուսուցման E-school Armenia>> ազգային հարթակի գործարկման աշխատարանի եռօրյա վերապատրաստումներին Աղվերանում:Քիմիայի ուսուցչուհի Ս. Մաշինյանը քիմիայի դասերի ընթացքում աշխատում է շեշտը դնել գործնական աշխատանքների վրա,քանի որ մենք գնում ենք դեպի բնագիտական առարկաների տեսանելի դարձնելու ուղղությամբ:

Ս.Մաշինյանը ամբողջ տարվա ընթացքում հեռավար աշխատել է Սյունիքի մարզի Գորայք միջնակարգ դպրոցում, դասավանդել է 7-ից 12-րդ դասարաններում և ունեցել է 12 դասաժամ:

Ար. Խալաթյանի կատարած աշխատանքները անգնահատելի են և վերաբերվում են ամբողջ դպրոցին: Որևէ միջոցառում առանց իր ղեկավարության և օգնության չի անցկացվում: Նա նաև աշակերտների մոտ զարգացնում է հանրօգուտ աշխատանք կատարելու ունակությունը և օգնում այդ աշխատանքներում, նաև օրինակ ծառայում:

Մ/մ բոլոր անդամները ուստարում նախատեսված բոլոր գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքները կատարել են ժամանակին և գրանցել մատյանում: Նրանցից յուրաքանչյուրը ամիսը մեկ անգամ մ/մ նիստերին ներկայացրել է իր կատարած աշխատանքները: Ուստարվա ընթացքում անցկացրել ենք 9-ը մ/մ նիստեր և գրանցել արձանագրությունների մատյանում: Մ/մ բոլոր անդամները պարբերապար մասնակցել են ծնողական հանդիպումներին և զարգացրել ծնող-ուսուցիչ կապը: Մ/մ անդամները նաև անհատական աշխատանք են կատարել ներառական կրթությամբ աշակերտների հետ: Դեկտեմբեր ամսին ԳԹԿ-ի կողմից 8ա և 8բ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվեց գրավոր աշխատանք, որը համակցված թեստ էր՝ ֆիզիկա- քիմիա առարկայից: Պատրաստվում ենք 9-րդ դասարանի ավարտական քննություններին: Աշակերտների հեը ուստարվա ընթացքում կատարել ենք համապատասղան աշխատանքներ մաթեմատիկա,ֆիզիկա,քիմիա,կենսաբանություն առարկաներից:

Մ/մ 2022-2023 ուստարվա աշխատանքները համարում եմ բավարար:

<u>Բնագիտամաթեմատիկական</u>

<u>Մեթոդմիավորման նախագահ՝ Ս.Մաշինյան</u>